Մի Քանի Նոր Գրչագրեր

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Հայ գրչագրերն եւս, հայ ժողովրդի նման, ցրուած են ի սփիւռս աշխարհի: Այս է գլխաւոր պատճառը, որ երբ մի նոր քաղաք կամ երկիր եմ այցելում, տեղի հայերի հետ, փնտռում եմ նաեւ հայ գրչագիրներին, լինեն դրանք իրենց հարազատ տէրերի՝ հայ ժողովրդի զաւակների ծոցում, թէ ինչ որ օտարի պատկանող, մի արուեստի ու հնագիտական թանգարանում:

Վերջին չորջ տասը տարուայ ընթացքում, այլ գրչագրերի հետ, որոնց մի մասի ցուցակ անցեալում յանձնուել է մամուլին, գտնուել են այլ գրչագրեր եւս, որոնց ցուցակը բերում ենք այստեղ:

Ներկայ գրչագրերը թուով տասը հատոր են, որոնցից վեցը Աւետարան, իսկ չորսը մէկական օրինակ, Պարզատումար–երգարան, Բառարան–ժողովածու, Մանկութիւն Յիսուսի եւ Պատմութիւն Լուքֆիկին եւ Աղէքսանդրի:

Այս գրչագրերից վեցը գտնւում են Նոր Ջուղայում, երկուքը՝ Թեհրանում, մէկը՝ Լոնտոնում եւ մէկն էլ՝ Աթենքի Բենաքի թանգարանում: Վերջին երկուսը ցուցակագրել եմ 1977 եւ 1978 թուականներին, երբ առիթն ունեցայ կարճ ժամանակով յիշեալ քաղաքներն այցելել:

Վստահարար դեռեւս որոշ անհատների մօտ եւ կամ զանազան թանգարաններում, դարձեալ կը գտնուեն նոր գրչագրեր, որոնք դեռեւս անծանօթ են մեր բանասիրութեան, որոնց յայտնաբերումով ոչ միայն նոր թիւ կ'աւելանայ մեր ներկայ ունեցած ու յայտնի գրչագրերի թիւի վրայ, այլ եւ նրանց բովանդակութիւնը եւ ունեցած յիշատակարանները կարող են նոր լոյս սփռել մեր պատմութեան մութ կէտերի վրայ եւ օգտակար հանդիսանալ մեր ուսումնասիրողներին ու բանասէրներին:

ԹԻՒ 1
ԱՒԵՏԱՐԱՆ
1480 Թ·

Թերթ՝ 271: Պրակ՝ 22, *իւրաքանչիւրը* 12 *թերթ*: Մեծութիւն՝ 20·7×15·5×7 *սմ*·: Նիւթ՝ *Դեղնաւուն հաստ թուղթ*: Կազմ՝ *Կաշեպատ տախտակ, վրան զարդագծեր, ներսից դունաւոր չիթ կտոր*: Պահպանակ՝ 4 *թերթ մագաղաթեայ՝ սկզբում եւ վերջում երկուական*: *Աւետարանի մասեր, երկաթագրով* 9–10-*րդ դար*: Վիճակ՝ *Լաւ, որոշ մասերում ջուր տեսած եւ որոշ էջեր փոքր սեւացած, մի քանի պրակ փոքր տեղահանուած*: Պարապ թերթեր՝ 3*բ*, 4*ա*, 4*բ*, 7*ա*, 55*բ*, 56*ա*, 268*բ*, 269: Գիր՝ *Բոլորգիր*: Գրութիւն՝ *Երկսիւն*: Տողեր՝ 21: Գծումները՝ *ձնշումով, մատիտով լուսանցքագծեր*: Թանաք՝ *Սեւ, գլուխների սկզբնատողերն ու մեծատառերը կարմիր*: Զարդագրութիւններ՝ *Աւետարանների սկզբնատողերն ու մի շարք մեծատառեր, հաւքագրեր եւ կենդանագրեր*: Պատկեր՝ *Չորս աւետարանիչների, Մատթէոսինը վնասուած* 7*բ*, 80*բ*, 128*բ*, 206*բ*: Կիսախորան՝ 8*ա*, 81*ա*, 128*բ*, 206*բ*: Ճակատազարդ՝ *Չունի*: Լուսանցազարդ՝ *Բաւական թուով ծաղիկներ եւ թռչուններ, մանրանկար* 13*ա*: Ժամանակ՝ *Չիթ* (1480): Պատուիրատու՝ *Ամիր բէկ, տէր Սիմոն, Վարդանէս եղբայրներ*:

Ծանօթութիւն· *Պատկանում է Սարգիս Մարտինին, Թեհրան*:

ԳԼԽԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

264*ա* — *Արդ մեք երեքեան եղբարքս միաբան Ամիրէկս տ[է]ր Սիմոնս, Վարդանէս սիրով եւ յաւժար կամաւք եւ յղնայ փափաք տենչմամբ ցանկացաք եւ գնեցաք զսբ· աւետարանս ի մայրաքաղաքս Բ[ա]ղնի: Եւ եդաք յիշատակ ի դուռն աթոռոց Սբ· Ա[ստուա]ծածնիս եւ Սբ· Շողայկաթի Ա[ստուա]ծածնինս եւ Սբ· Ստեփաննոս նախայվկայիս եւ Սբ· Ատենայհաս Սբ· Սարգիս զօրաւարիս*:

Արդ եւ ես անկ[ե]ալ աղաչեմ զձեզ ով լուսերամ դասք ք[ա]հ[անայի]ցդ յորժամ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի Քս· զպրն Ամիր բէկն եւ իւր կողակիցն, Թուխթարն: Տ[է]ր Սիմոն եւ իւր կողակիցն, Խանբէկին Փարրին Վարդանէսն եւ իւր կողակիցն Խաթունն եւ քվերն Բէկիսուլթանին:

Դ[ա]ր[ձ]ա[ւ] յիշեցէք ի Քս· զհայրն իմ պրն· Խաւճէն եւ զմայրն իմ Գուլիաչէն ամէն: Ընդ նմին հաւրեղբարն իմ Բուտախն եւ կողակիցն իւր (264*բ*) *զտ[է]ր Ակոբն եւ իւր կողակիցն եւ ամենայն արեան մերձաւորքն ամէն*:

Արդ գրեցաւ սայ զսբ. աւետարանս ի Թվիս հայոց տաւմարիս ՉԻԹ (1480) (Չ–ի վրայ թանաքոտուած է եւ մօտը մի տառ ջնջուած) ամին, որ Աւմար Սուլդանն, Լալա փաշէն աւերաց եւ գերաց զաշխարհս Հայոց։ Ով կարէ պատմել կամ գրով արկանել միթէ ողորմածն Ա[ստուա]ծ ողորմած լիցի նոցա։ Եւս առաւել պրն. Ամիրբէկին տ[է]ր Սիմայոնին, Վարդանիսին։ Վարձատուն Քս. եւ վարձս ի Քս.է առցեն. յիշեալքն եւ յիշեցողդ եւ Քս.ի փառք յաւիտեանս Յամէն։ Յամէն։ Աւրհնեալ է Աստուած։

265ա Դարձեալ յիշեցէք ի Քս. զԱմիրբէկն եւ իւր եղբարքն ամէն հանդերձ մարմնաւոր ծնաւղաւք ամէն, աւուրն դատաստանին պարգերես եւ անամաթ կացուցանէ առաջի Քս.ի, Ա[ստուա]ծ ողորմիւ ասացէք ի Քս. որդի եւ հայր մեր յերկինս սբ.։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Զվերջին կազմողս Սբ. Աւետարանիս զմեղաւք լի Զագ(ք)արէս յիշման արժանի արարէք որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով միով տ[է]ր ողորմ[ա]իւ ի Թուականս Ջ. կա. (1512)։ Արդ յիշեցէք ի սբ. յաղաւթս ձեր (ջնջուած մի քանի բառ), որ այս ամի պակասեցաւ առ Քս. որո յիշատակ նորա, Աւրհնութեամբ եղեցի ամէն։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

263բ Փառք եզակի տ[է]րութեանն եւ եռահիւսակ անձնաւորութեանն հաւր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Դարձեալ յիշեցէք ի քրիստոսասէր Աստուածայտուր եւ կողակիցն Վարդայխաթուն եւ զծնաւղսն իւր Գաւղալ եւ զմայր իմ Սառայխաթուն եւ զեղբարն Յէմինբէկն որդոյն Կարապետն։ Միւս եղբարք Յովանէս եւ զհանդուցեալսն Թորոսն, Պալին, Սահակն, Ամիրն, Պողոսն եւ զքոյրն իւր Հոռոմսիմէն Խաթուն փաշէն։ Դարձեալ յիշեցէք ի Քս. տ[է]ր Աստուածատուր որդին Վարթանէս դուստր Ուստիանէն որ Քս.է հանգուցալ միւս դուստր Հռոպսիմէն Թուղթար փաշէն։ Դ[ա]րձ[եա]լ. յիշեցէք ի Քս. տ[է]ր Ա[ստուած]ատուր, Արդ, գնեցաւ զսբ. աւետարանս ի Թվիս հայոց տաւմարիս ՌԿԳ (1614) ամին ի հայրապետութիւն տեառն Դաւթի, ով կարէ պատմել կամ գրով արկանել միթէ ողորմած լիցի նոցա։ Եւս առաւել տ[է]ր Աստուածատուրին, Յեմինբէկին վարձայտուն Քս. եւ վարձս ի Քրիստոսէ առցեն, յիշալք եւ յիշեցողդ եւ Քրիստոսի փառք յաւիտեանս Յամէն։ Յամէն, Աւրհնեալ է Ա[ստուա]ծ։

Դարձեալ յիշեցէք զնորոգողս սորա զՔանաղայ դպիրս եւ ծնողաց իմոց ամէն։ (Մի քանի տող ջնջուած)։

265ա Փառք եւ գոյութիւն հօր եւ որդոյ.....

Արդ զնորհօք ա[ստուա]ն. սկըսաք եւ ողորմութեամբ նորին կատարեցաք զսբ. աւետարանս ի լաւ եւ ընտիր օրինակէ գրեցաւ յիշատակարանս թվին ՌՃԺԵ (1666) ի մայրաքաղաքս Շօշ այսինքն ի Ասպահան ի գօղս Մարունայ։ Եւ ի հայրապետութեան տոհմիս Հայկա[յ]ին տն. Յակոբի կաթուղիկոսի եւ ի թագաւորութեան պարսից փոքր Շահապասին եւ ի հովայպետութեան հօտիս տ[է]ր Դաւթի արհեպիսկոպոսի եւ քաջ բարունայպետի հեզայհոգի ա[ստուա]ծարան վարդապ[ե]տի։ Ի խնդրոյ բարեմիտ եւ երկիւղած աստուծոյ առն Ուսէփին որ ըստացաւ ըս սբ. աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւրն եւ իւր ծնողացն մահդասի Յովասափին, Սառայխաթունին, յիշեցէք եւ ա[ստու]ած ողորմի ասացէք ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քս. Ուսէփն եւ իւր եղբայրքն Մարտիրոսն, Յարոնն, Բարաղամն, Յովանէսն եւ քուրն Նազգուն Անային, յիշեցէք եւ...

Դարձեալ յիշեցէք ի Քս. Ուսէփն եւ իւր կողակիցն Ոսկիծամիկն եւ որդիքն Նիկողոսն եւ Ակոբճանն, Ոսկան զոր հանգուցեալ են առ Քս. եւ միւս որդին Աւետիսն, յիշեցէք եւ Ա[ստուա]ծ...

Դարձեալ յիշեցէք ի Քս. Ուսէփն եւ կողակիցն իւր Ոսկիծաիկն եւ իւր անքերն Վարդանն եւ իւր կողակիցն Մարենն, եւ որդիքն, Թաթոսն Ասատուրն յիշե....

Դարձեալ յիշեցէք ի Քս. զՅուսէփն եւ զորդին իւր Աւետիկն եւ սորայ կողակիցն Անային եւ զմիւսն կողակիցն Վարվառն եւ զորդին իւր Մանսուրն եւ զդուստրն Վարթխաթունն եւ զդողումն յիշեցէք։

ԹԻՒ 2
ԱՒԵՏԱՐԱՆ
1582 թ.

Թերթ՝ 236 (վերջինը մագաղաթեայ պահպանակ, կրկնակ ծալուած, ժ. դարի Աւետարանի թերթ)։ Մեծութիւն՝ 26·8×18×5 սմ.։ Նիւթ՝ Դեղնաւուն թուղթ։ Կազմ՝ Կաշեպատ տախտակ, ներսից կտաւ, վրան ունի զարդադրոշմներ եւ խաչանկար, Ա կազմի վրայ մետաղեայ զարդեր եւ խաչ որ կիսուած է, նաեւ զարդատեղի ծակոտիներ։ Պահպանակ՝ Վերջում երկու թերթ ծալուած մագաղաթ։ Վիճակ՝ Բաւարար։ Պարապ թերթեր՝ 124ա, 1, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 9բ, 10ա, 11բ, 12ա։ Գիր՝ Բոլորգիր։ Գրութիւն՝ Երկսիւնակ։ Տողեր՝ 24։

Գծումները՝ ճնշումով։ Թանաք՝ Սեւ, մեծատառերը կարմիր։ Զարդագրութիւններ՝ Ունի։ Պատկեր՝ 12բ, Մատթէոս Աւետարանիչ, 124բ, Յովհաննէս Աւետարանիչ, եւ միւս աւետարանիչների։ Խորան՝ Ունի սկզբում։ Կիսախորան՝ Ունի։ Ճակատազարդ՝ Չունի։ Լուսանցազարդ՝ Որոշ չափով։ Ծաղկող՝ Յովհաննէս։ Գրիչ՝ Կիրակոս որդի Գրիգոր քահանայի։ Ժամանակ՝ ՌԼԱ (1582)։ Վայր՝ Անյայտ։ Պատուիրատու՝ Մահտեսի Յովհաննէս։

Ծանօթութիւն. Գրչագիրը պատկանում է Բենաքի Թանգարանին, Աթենք, որը ցուցակագրել եմ 1978 թուին երբ գտնւում էի այնտեղ։

ԳՐՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

233ա «Փառք եղակի....

Շնորհիւ Տեառն ամենակալին եւ նորին աւգնականութեամբ աւարտեցաւ եռահրաշ եւ հոգիազարդ Աւետարանս որ էր շաղկապեալ երանեալ աւետարանչացն զոր արար....

Արդ ես յետնեալս տառապեալս մեղաւք եւ թշուառականս հոգով վերջին ի սպասաւորաց բանին, հողս եւ.....

Այլ եւ ծառայիցդ Աստուծոյ ծառայս Կիրակոս պիտակս, որ զանունս առի եւ ի գործոց ունայն գտայ եւ թափուր։ Արդ ես ի սրտէ խոցեալ եւ մեղաւք լցեալս Կիրակոս զրեցի զսա ըստ իմում կարի որ թէպէտ որ էի խոտան եւ ծռազիր խոշորագիծ եւ պակաս, այլ իմով տկարութեամբս զրեցի, դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք զհայր իմ զԳրիգոր քահանայն եւ զծնաւղսն իմ եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութեան ամէն թվին ՌԼԱ (1582)»։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

12բ (Մատթէոս Աւետարանիչի նկարի ներքեւում.)

Զանարժան նկարողս զՅովանէս զրողս զմարմնոյս բտողս, զհոգոյս զրկողս, զմեռաց սիրողս, զբարիս ատողս, յիշեցէք ի Տէր եւ իմ մեղացն թողութիւն խնդրեցէք ի յԱստուծոյ։

235բ Յիշատակ է Ս. Աւետարանս Մահտեսի Յովանիսին եւ իւր կողակցին Մահտեսի Սառային եւ իւրեանց հոգւոյն, կրկին նորոգել տուին սուրբ Աւետարանս թվին ՌՃԻԹ (1680) [Յ]ունիս ամսոյ ԺԹ (19)։

[Յիշատակ է] Մահդեսի Յովհաննէս զորդի զորդոյն եւ զկողակիցն զՄահդեսի Սառայն եւ զնորասունկ որդին զԱրութ..... (որդնում է Ս. Նշան եկեղեցին)։

ԹԻՒ 3
ԱՒԵՏԱՐԱՆ
1630 թ.

Թերթ՝ 197: Նիւթ՝ *Նուրբ մագաղաթ*: Պահպանակ՝ *Զունի*: Վիճակ՝ *Շատ լաւ*: Գիր՝ *Բոլորգիր*: Գրութիւն՝ *Երկսիւն, շրջագծերի մէջ, երբեմն շրջազարդերով*: Թանաք՝ *Սեւ, մեծատառերը կարմիր ու դունաւոր*: Զարդագրութիւններ՝ *Թռչնագրեր*: Գրիչ՝ *Գասպար*: Ժամանակ՝ *ՌՀԹ* (1630): Վայր՝ *Շօշ–Սպահան*: Պատուիրատու՝ *Ցակոբ, վերջին ստացող պրն. Սաֆարն եւ հայր Զաքարէն*:

Ծանօթութիւն. *Պատկանում է Սարգիս Մարտինին, Թեհրան*:

Թիւ 1 եւ սոյն Աւետարանը ցուցակագրելու նպատակով, սկսեալ 1972 թուից, տասնեակ անդամներ ժամադրուեցի եւ անդամներ եւս, նեղ կացութեան մէջ, իր տունը դնացի. բայց այդուհանդերձ չյաջողեցի սոյն գրչագիրը լրիւ ցուցակագրել, յատկապէս գրչի յիշատակարանը:

ԹԻՒ 4
ԱՒԵՏԱՐԱՆ
ԺԷ. ԴԱՐ

Թերթ՝ 260: Պրակ՝ 26: Մեծութիւն՝ 20·5×14·5×4·5 սմ.: Նիւթ՝ *Թուղթ*: Կազմ՝ *Կաշեպատ տախտակ, ներսից ունեցել է կանաչ գոյնի ծաղկաւոր մետաքս, որ դանակով կտրուել եւ հանուել է*: Վիճակ՝ *Բաւարար, որոշ թերթեր տեղահանուած*: Պարապ թերթեր՝ 51բ, 52, 57, 54ա, 126, 127ա, 200, 201, 202ա, 260բ: Գիր՝ *Բոլորգիր*: Գրութիւն՝ *Երկսիւնակ*: Տողեր՝ 25: Գծումները՝ *ձնշումով*: Թանաք՝ *Սեւ, որոշ տողեր եւ սկզբնատառեր կարմիր*: Զարդագրութիւններ՝ *Հաւքագրեր, Աւետարանների սկզբնատողերը եւ Գլուխների սկզբնատառերը*: Պատկեր՝ *Աւետարանիչների նկարները* 54բ, 127բ, 202բ, *պակասում է Մատթէոս աւետարանիչինը*: Կիսախորան՝ 1ա, 55ա, 128ա, 203ա: Լուսանցազարդ՝ *Աւետարանների սկզբնաէջերում եւ Գլուխների մօտ, ծաղկազարդեր եւ հրեշտակներ*: Ծաղկող՝ *Անյայտ*: Գրիչ՝ *Անյայտ*: Ժամանակ՝ *ԺԷ. դար*: Վայր՝ *Անյայտ*:

Ծանօթութիւն. *Պատկանում է Ցովիկ Էդգարեանին, Լոնտոն*: *Պակասում է գրչի յիշատակարանը*: *Զունի այլ յիշատակումներ*:

ԳՐՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՍԿԻԶԲԸ

259բ–260ա *Փառք ամենայն սրբ. երրորդութեան հաւր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ որոյ շնորհաւքն աւարտեցաւ եռահրաչ.... (մնացեալը պակասում է)*:

ԹԻՒ 5
ԱՒԵՏԱՐԱՆ
1938 Թ.

Թերթ՝ 218 + սկզբում IV եւ միջում III։ Գրչագիրը կանոնաւոր էջակալուած լինելով Աւետարանի սկզբից, այլեւս չխախտելու մտքով թողինք նոյն էջահամարները։ Պրակ՝ Խառը 8–12 թերթերով։ Մեծութիւն՝ 20×16×2·5 սմ.։ Նիւթ՝ Դեղնաւուն թուղթ։ Կազմ՝ Կաշեպատ քարդոն, երեսին Յիսուսի պատկերը տպածոյ, մետաղալարերով փակցրուած կազմին։ Վիճակ՝ Լաւ։ Պարապ թերթեր՝ I, II, 431–435 էջերը։ Գիր՝ Խոշոր բոլորգիր եւ շատ ընտիր ու համաչափ։ Գրութիւն՝ Միասիւնակ։ Տողեր՝ 25–26։ Գծումները՝ Մատիտով եւ ջնջուած։ Թանաք՝ Սեւ։ Զարդագրութիւններ՝ Գլուխների մեծատառերը եւ Աւետարանների սկզբնատողերը գունագեղ եւ բազմապիսի ձեւերով զարդագրութիւններ։ Պատկեր՝ Տպածոյ՝ կազմի ներսերում III, 326, 327, 327բ, գրչեայ՝ IV (Ս. Էջմիածին), չորս Աւետարանիչներ՝ V, 116ա, 196ա, 327ա, ծաղիկներ՝ VI, 116, 116բ, 196բ, 427 եւ աղքատ կնոջ լուման՝ 176։ Ծաղկող՝ Գրիչը։ Գրիչ՝ Յակոբ Գ. Հայրապետեան։ Ժամանակ՝ 1938։ Վայր՝ Նոր Ջուղա։

Ծանօթութիւն. Ձեռագիրը գրուած է գեղարուեստական բծախնդրութեամբ, ապա նոյն սիրով էլ ջրաներկով զծուած են չորս Աւետարանիչների եւ Գլուխների սկզբնատառերը, այլազան զարդաձեւերով, կենդանակերպերով, հաւքագրերով, մարդապատկերներով եւ այլն։

ԹԻՒ 6
ԱՒԵՏԱՐԱՆ
1933 Թ.

Թերթ՝ 172 (էջ 336+VIII), Պրակ՝ 13, իւրաքանչիւրը 12–16 թերթ։ Մեծութիւն՝ 22,2×16×2,5 սմ.։ Նիւթ՝ Դեղնաւուն հաստ թուղթ։ Կազմ՝ Կարմիր թաւշապատ հաստ խաւաքարտ, ներսից տպածոյ կարմիր փայլուն գունաւոր թուղթ։ Պահպանակ՝ Կարմիր գունաւոր ոսկեգոյն եւ սպիտակ թուղթ։ Վիճակ՝ Շատ լաւ։ Պարապ թերթեր՝ էջ I, II, III, IV, V, VII, 32բ, 118ա, 166ա, 194ա, 196ա, 356ա։ Գիր՝ Բոլորգիր։ Գրութիւն՝ Միասիւնակ։ Տողեր՝ 26–29։ Գծումները՝ Մատիտով, յետոյ ջնջուած։ Թանաք՝ Սեւ։ Զարդագրութիւններ՝ Աւետարանների սկզբնատողերն ու բոլոր Գլուխների սկզբնատառերը, զանազան եւ զանմենազան ծաղիկներ, թռչնագրեր, կենդանագրեր եւայլն։ Պատկեր՝ VI, VIII, 32ա, 118բ, 194բ։ Խորան՝ 196բ, 356բ, 425։ Կիսախորան՝ 1, 118, 195, 326։ Ճակատազարդ՝

Զունի : Լուսանցազարդ՝ 3, 7, 11, 19, 21, 31, 33, 39, 43, 53, 57, 65, 71, 72, 77, 85, 93, 101, 107, 113, 117, 119, 125, 133, 134, 143, 147. 155, 161, 165, 169, 173, 175, 181, 189, 194, 197, 229, 233, 235, 237, 241, 253, 261, 267, 273, 279, 281, 283, 289, 293, 301, 309, 317, 325, 333, 339, 345, 353, 359, 367, 373, 379, 381, 389, 397, 399, 403, 413, 421 : Մանրանկար՝ 309 : Ծաղկող՝ *Գրիչը* : Գրիչ՝ *Յակոբ Հայրապետեան* : Ժամանակ՝ 1933 : Վայր՝ *Նոր Զուղա* :

Ծանօթութիւն. *Նկատի ունենալով որ ձեռագիրը գրչի կողմից էջակալուած էր, կարգը չխախտելու համար թողեցինք նոյնութեամբ. իսկ չհամարակալուած էջերը, սկզբինը նշանակեցինք հռոմէական թուանշաններով, իսկ միջերինը նախորդ էջը Ա. եւ Բ նշաններով* :

ԳՐՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

327–328 *Փառք ամենասուրբ երրորդութեան որ կարողութիւն տուեց ինձ Յակոբ Գ. Հայրապետեանիս, աւարտել այս Սուրբ Աւետարանը յամի Տեառն* 1930–*ին ընդ հովանեաւ Ս. Ներսէս Եկեղեցւոյ : Ի թագաւորութեան Ռէզա Շահ Փահլէւոյ : Եւ ի Հայրապետութեան Տեառն Խորէնայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Ամենայն Հայոց : Ամենափրկչեան սրբոց վանաց առաջնորդ թեմիս Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց Տ. Մեսրովբ արք Եպիսկոպոսի ժամանակ :*

Արդ խնդրում եւ աղաչում եմ ձեզանից որ երբ հանդիպէք կամ կարդաք այս սրբատառ Աւետարանը ձեր աղօթքի մէջ յիշէք նախ ինձ Յակովբիս, որդի Գալստանի, որ անծանօթ լինելով գրչութեան արուեստին, ձեռնարկեցի եւ աստուածատուր համբերութեամբ աւարտեցի սուրբ մատեանս : Քանզի 1890 *թուին* 12 *տարեկան հասակում նիւթական կարիքներից հարկադրուած թողեցի իմ սիրեցեալ բողոքականաց դպրոցն եւ մտայ աշակերտ* (327) *հիւս[ն]ութիւն Գէորգ Բօլղեանի մօտ, որտեղ մնացի լման* 10 *տարի, այնուհետեւ նոյն արհեստով առանձին գործեցի մինչեւ* 1930 *թիւն : Ձեռնարկեցի այս Աւետարանի գրչութիւնը եւ երեք տարի տեւեց, բայց ոչ անդադար, այլ ազատ ժամանակները եւ մեծ մասամբ գիշերները : Վասն որոյ աղաչում եմ ով որ կարդայ ներողամիտ լինի սխալներիս, մասնաւորապէս տողադարձութիւնիս մէջ, քանզի ինչպէս յիշեցի տասներկու տարեկան էի, երբ դպրոցս թողեցի, նորից խնդրում եմ ընթերցողներից յիշել ինձ Յակովբին, եւ ինձ հետ իմ սիրելի կողակից Վարթուհուն, հօրս հանգուցեալ Գալստան Հայրապետեանին, մօրս Եղիսաբեթին, վերջապէս խնդրում եմ յիշել որդիներիս, Գալստանին, Գրիգորսին եւ Ներսէսին, դստերացս Եղիսաբեթին, Մարգարիթին, Մէրուն, իրենց զաւակաց հետ որոնց Տէր Աստուած երկար կեանք տայ եւ երջանկու-*

թիւն, եւ ով որ յիշի, թող ինքն յիշեալ լինի առաջի Աստուծոյ եւ արժանաւոր նրա առատաբաշխ շնորհացն։

Յակոբ Գ. Հայրապետեան, ի Նոր Զուղա 1930 թիւն։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

326. Հիացմունքով տեսայ պ. Յակովբ Գալստանեանի սոյն գործը։ Մեր ժամանակներում շատ քիչ մարդ կը գտնուի այսքան բարեխիղճ ու այսքան համբերող, որ կարողանայ այսքան մաքուր ու մանրակրկիտ գործ արտադրել։ Հիանում եմ պ. Գալստանեանի համբերութեան եւ ընդունակութեան վրայ։

1 Յունիս 1933 թ. Զուղա, Յ. Տէր Յակովբեան։

Քչերը հաւատացողներից՝ այնպիսի մաքուր զգացումով կարող էին արտայայտել իրենց հիացումը Աւետարանների մեծ արժանիքների հանդէպ, մանաւանդ մեր օրերում, ինչպէս պ. Յակովբ Գալստանեանը՝ իր այս հիանալի ձեռագրով։ Ուստի չի կարելի չհիանալ պ. Գալստանեանի զոհողութեան ու մաքուր զգացումների վրայ։

2-ն Յունիսի 1933 թ.ին Նոր Զուղա, Եր. Հայրապետեան(*)։

ԹԻՒ 7
ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ-ԵՐԳԱՐԱՆ
ԺԷ. դար (1660?)

Թերթ՝ 149։ Պրակ՝ 15, իւրաքանչիւրը 10 թերթ։ Մեծութիւն՝ 14×9.7×2.5 սմ.։ Նիւթ՝ Դեղնաւուն հաստ թուղթ։ Կազմ՝ Կաշեպատ տախտակ, ներսից մանիշակագոյն կտաւ, կարմիր եւ սպիտակ ծաղիկներով, վրան եղել են զարդագծեր, որ մաշուել են։ Վիճակ՝ Բաւարար, որոշ մասեր թերթահան եւ միջից պակասաւոր, լուսանցքներուն կան մեծ թուով գրչափորձեր, խաղագծիկ-նկարներ։ Պարապ թերթեր՝ 1ա եւ 11ա, որոնց վրայ անվարժ ձեռագրով եղել են գրչափորձեր եւ գծագրութիւններ, Գիր՝ Բոլորգիր, թ. 137 եւ 138 նոտրգիր եւ տարբեր գրիչ։ Գրութիւն՝ միասիւնակ։ Տողեր՝ 15։ Գծումներ՝ ճնշումով։ Թանաք՝ Սեւ, վերնագրերն ու մեծատառերը կարմիր։ Զարդագրութիւններ՝ Մի քանի մեծատառ հաւքագրերով, եւ զարդագրերով։ Պատկեր՝ Զունի։ Լուսանցազարդ՝ Մի քանի հատ։ Գրիչ՝ Խաչիկ։ Ժամանակ՝ ԺԷ. դար (թերեւս 1660 թ.ին, քանի որ տարեգրերի աղիւսակն սկսւում է Ռ.ԺԹ թուով։ Վայր՝ Անյայտ, հաւանաբար Նոր Զուղա։

(*) Յակոբ Տէր Յակովբեանը եղել է մտաւորական եւ Նոր Զուղայի Ազգային դպրոցների տեսուչ, իսկ Երուանդ Հայրապետեանը՝ ուսուցիչ։

Ծանօթութիւն. Պատկանում է Պր. Մանասէր Լազարեանին (Ղազարեան), Նոր Ջուղա:

Թւում է որ գրչագրի վերջին «Տաղարան» մասը յետոյ է աւելացուել «Պարզատումար»ի վրայ, քանի որ երկրորդ մասի 8-րդ թերթի վրայ երեւում է մի «ա», որ ցոյց է տալիս օր դա մի այլ գրչագրի առաջին պրակն է եղել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1բ Ամիսք եւ տօմարք հայոց: Եւթներակն (աղիւսակ):

2ա–101ա Զ կրկնակ ամսոց այսպէս արա. (ապա խօսում է վերադիրի եօթներեակի, տանուտէրերի, հայկական ամիսների եւ այլնի մասին, որը հայկական եւ Ազարիայի ամիսներով շարունակւում է աղիւսակներով մինչեւ թ. 101ա):

101բ–124բ Պարզեալ է տոմարս հեշտ է դիւրին վասն դիտողաց որ ամէն մարդ հեշտ իմանայ: (Սկսւում է Ա. տարեգրից եւ շարունակւում մինչեւ Ի-ն):

125ա (Այստեղից սկսւում է «Տաղարան»ի բաժինը, ուր կան հայերէն եւ թուրքերէն լեզուներով երգեր, բերում ենք առաջին եւ վերջին տունները միայն):

Այրէն մինչեւ ի Քէն քեզ գոհութիւն տէր,
Բարեաց քոց գոհանամք յաւիտեան տէր,
Գովել եւ փառաւորեալ երրորդութեան տէր,
Դու ես երեք անձինք եւ մի բնութիւն տէր:

Վերջին տունը՝ (բանաստեղծութիւնը գրուած է Այբուբենի վրայով):

Մեղաւոր Վարդանէսն ի քէն խնդրէ տէր,
Մի թողուր ի ձեռաց եւ մի մերժեր տէր,
Ցիշեայ եւ այց արա ի գալըստեան տէր,
Անմահ արքայութեանդ արժանացոյ տէր:

126ա Աստուած անեղ անհասակայ,
Հայր գթութեանց ինձ որդորմեայ,
Բանդ է հօրէ անճառ ծնունդ
Որ մարմնացար ի յիս գթայ:

. . . . . .

Տէր եւ Աստուած քեզ դաւանիմ
Վասն ծնողիդ ի յիս գթայ,
Խաւարեալ Հէրապետիս,
Ըստեղծելոյն ի յիս գթայ.
Եւայէ զիս առաբերան,
Մեղուցէր եմ միշտ անխափան

(Թւում է որ մէկ տող այստեղ պակաս է, որովհետեւ թերթը

վերջանում է, իսկ յաջորդն սկսւում է Զ. այբուբենի տառով, որով յաջորդ երգի առաջին մասը չկայ, որն ինչպէս եւ վերինը գրուած են այբուբենի վրայով):

. . . . . .

129բ *Փառք երգեն Աստուծոյ մշտնջենաւոր,*
Յարաղուարձ խնդութեան փառօք երկնաւոր,
Քեզ լիցի այս խրատով մարդ բանաւոր,
Որ զղջանաս եւ լինիս տեառն արժանաւոր:

129բ *Աղբիւր կենդանի բխումն զանազան,*
Մեղայ քեզ մեղայ կոյս անապական,
Երեսիդ փափակ զօրօքդ վերնական,
Երանեալ ընտիր (թ. 130ա) թագուհման,
Ժառանկող դրախտին եւ անմահութեան
Մեղայ քեզ, մեղայ կոյս անապական:

. . . . . .

132բ *Այս աշուղ Քուչակ որ կասեն ի Վան,*
Զար վիրօք ի լի եւ դատարկաբան,
Որդն եմ եւ փոշի եւ հող անպիտան,
Մեղայ քեզ մեղայ կոյս անապական:
Տըւէք ողորմի ասէք հայր մեղայն,
Աշուղ Քուչակին հոգւոյն փրկութեան,
Որ դուք այլ լինիք ողո[րմեան?]

(Այստեղից թերթ է պակասում, տունը չի լրացուել, իսկ յաջորդ թերթն սկսում է մի այլ երգի կէս տունով, որ է).

133ա *Քո պատկերիդ գին արարի*
Մեծն ի Հռոմ Յոանգստան:

. . . . . .

133բ *Քէշիշ օղլի լաւ կու գովես,*
Բանդըւանես քովն բոստան,
Ախըրըն դուն ավդալ կեղնես,
Քո միջացդ կապես փոստան: (8 տուն է)

133բ *Խնդրեմ զառաջին զսէրդ,*
Ի քեզանէ այիմ սիրելի,
Շատ մօհ[ա]բաթ ունի,
Առ քեզ զամէնն մնաց իմ սրտի:

. . . . . .

134բ *Քէշիշ օղլիս եղկելի,*
Որ ազգաւ եմ Զուղայեցի,
Եւ դայս ի լալով բանէրս
Ի վերայ այրիս ասացի: (7 տուն)

134բ Աչըդիաս քար մուշկըը
Յարգահ օլսայ խուպոյ մայիլ,
Ես մին դարտի եմ հանդիպել
Ինչ անեմ սիրտս էրման ա:

. . . . . .

Քէշիշ օղլի դիվանայ,
Վարաղլուայ Թիմարէլայ,
Քո ըստեղծածն մեծ–այ,
Նայ քեզ համբերութիւն կուտայ,
Ինչ առես սիրտդ երմանէ,
Ըռաղուպն դարհոյ մեռմանայ: (10 տուն)

135բ Իմ սիրական սպիտակ երես,
Գիտեմ որ դուն ինձ կու սիրես,
Կրակ ձըդեցիր սիրտս կերես,
Զալումի այր դուն ըռահմ չունիս:

. . . . . .

Քէշիշ օղլին կանէ կոծն,
Խիստ կու տոժայ սրտիս խոցն,
Ձես աւատալ եկ տես բոցն,
Զալումի այր դուն ըռահմ չունիս: (5 տուն)

136ա Յայր քանի անես մահանայ,
Քո սիրոդն յոնց դիմանայ,
Յէնց բան անենք մարդ չիմանայ,
Էլն կեղնի խաղի(?) ինձի:

. . . . . .

Քէշիշ օղլին խիստ կուբոցայ,
Սիրոյտ կրակումն երվեցայ,
Վալայ բիլայ հիւանդացայ,
Դուն արիր նաչաղի ինձի: (6 տուն)

137ա (Երգի վերջին մասը կայ, գրուած է նոտրգրով, թէեւ թղթով ու լուսանցքագծով նման է միւս թերթերին, բայց 137 եւ 138 թերթերը տարբեր գրիչ են):

Խաւար Ասապովիս,
Վիրաւորեալ հոգիս,
Աղատեալէ դերիսէ
Անապ..... (4·5 տուն)

137ա Տաղ Ասապովի
Ա՛ռ քեզ գոչեմ արտասուելով,
Աղաղակեմ ողբալով
Հոգոցն [հ]անեմ յառաջելով

Մեղայ ասեմ միշտ լալով։
Կուս Մարիամ կուս Մարիամ Աստուածածին է
Օգնեայ խաւարեալ դերուս,
Օգնեայ մոլորեալ դերոյս։
Վերջը՝ (եթէ միջոցից թերթ չի պակասում եւ տարբեր երգ չէ)։
Մի լայր ով դու կին, ես եմ կենդանին,
Յիսուս Միածին, զոր հրէաքն անպարտ խաչեցին։
Մի լայր Մարիամ Մագդաղէնացի,
Ես եմ միածին, որ անմեղս վիրաւորեցին։ (10 տուն)
137բ Տաղ վասն մեղաց բանի որ մեղք ունենայ.
Դիշեր ցերեկ ես յետ մեղայ
Տանջւում եմ զուլում տանջւում եմ,
Լուսն եմ տվեր խաւարն առել
Ուրախ եմ Ղուլուն օլիմ ուրախ եմ,
Օր գնաց դիշեր գնաց ումբր գնաց,
Ղուրբան եմ քեզ, ումբր գնաց։
Վայ էն աւուրն օր ես եղայ.....
(Մնացեալը պակասում է, իսկ յաջորդ էջից սկսւում է թուրքերէն երգ, որի սկիզբը չկայ, բերում ենք վերջին երկու տաւնը)։
Ճասուկ օղլի արզայեաշմիշ,
Իստարքի խանայ վէրայչելս եօլինի,
Գօղլայիր հաքիմ գեալմազ դիշխարի։
Հար քիմին դէջին
Մակայ բիր հալի եօխ տուր,
Դունեադայ բասարաթի
Բաղլամիշ աղրալի եօխ տուր։ (16 տուն)
141ա Ղամալուր գօնդլումի չաքար զուլումաթայ,
Բիր զաման գօրմասամ սանայի պէլնայ,
Ջամալուն չալֆասի սաղիզ ջանաթայ,
Բնուրի թաջալին սան այիսպէլայ։
142բ Խիալում յամդամի ախուլմգայ եաղի
Բաչ գօթուր ուվիչար վասինդան դաչա գեօր,
Եաղլի օլուր մօուրաթուն չարապի
Մարդանադուր մարդ ալինդան իչայ գեօր։ (5 տուն)
142բ Խիալում յամդամի ախլումգայ եաղի
Մէկեար այրըլուղի եաղի նէլարսան,
Ախլում բաչտայ դուրմազ ռահում(*),

*) Ինչպէս այս, այնպէս էլ միւս երգերը տողատուած չեն, հետեւաբար երբեմն դժուար է լինում տողերը ճիշդ գրել։

Բաղամ–դա մա.....

(Մնացեալը պակասում է եւ յաջորդ էջն սկսւում է հայերէն մի երգով որի վերջին տունն այս է).

143ա *Սափուր եւ ունայն տառապեալ հոգի,*
Որ սուտ անուամբ Յովաննէս կոչի,
Յոյս եւ բարեխօս է նայ զքեզ ունի,
Ընտրեալ յաշխարհէ կոյս Աստուածածին: (4·5 տուն)

143ա *Բիր մարալայ աւշի օլտում,*
Գէզար մաստանայ մաստանայ,
Իր ախ տուրար գերու պախար,
Գօղի մաստանայ մաստանայ:

. . . . . .

Գէուսի–տուր թուրլու ըռանկի,
Սարու տուր բէ աղղու ըռանկի,
Քէշիշ օղլի էթմիշ բանգի,
Գէզար խաստանայ խաստանայ: (7 տուն)

144ա *Նալահ գօրտում ման պիր մալաք,*
Տուշտի գօղլում նէջէ դայիմ,
Դարտայի–անդում օլդում հալաք,
Տուշտի գօղլում նէջէ դայիմ:

. . . . . .

Ման Քէշիշ օղլի աղլարամ,
Ղանլու ջղարում դաղլարամ,
Գէնդըմի զամայ բաղլարամ,
Տուշտի գօղլում նէջէ դայիմ: (7 տուն)

144բ *Բրօ է ջէրան գօղլուտան,*
Բանդօ–նարամ գօղլում գօնմազ,
Թիթ թի գիլու աւաղլուտան,
Բանդօնարամ գօնգլում գօնմազ:

. . . . . .

Քէշիշ օղլի գէրվարայիմ
Բիր տօղլու խարար ալայիմ,
Իստարամ ֆարեղ օլայիմ,
Բանդօնարամ գօնգլում գօնմազ: (5 տուն)

145ա *Կանչեմ այս Ծովիս վրայ,*
Ծովս ամէն թանկ լինենայ,
Զինչ որ չամ եղէք լինի,
Նայ զամէն զալամ լինենայ,
Զինչ որ հայք էրէց լինի,
Գուռջըստան Հոռոմ աբեղայ,

Նոքա չկարացան գրել,
Այնչափ դարտ որ իմ սրտիս կայ։ (3 տուն)

(Այս բանաստեղծությունը երեք նման տուն է, որ կարելի է երկու տուն համարել, կամ գրել երկար տողերով։ Վերջում չունի երգչի անունը)։

145բ Շօխչօխ սալամ օլսուն մանում իայրըմայ,
Ղուլբանդամ ըղազատէ լայ էրմանի,
Ազար ավհալըմ ըղսօրսան իմանում,
Գօղըմըզ իաշիլան էթտի թարմանի։

. . . . . .

Քէշիշ օղլի դէրիաշլար իախարամ,
Շէդայ բլբուլ քիմի դուլայ պախարամ,
Ղըզիլ գուլուն թիքանլարին եխարամ,
Ղօռխարամ քի դաֆըլ սանջայ խարմանի(?)։ (5 տուն)

146բ Երիէ նազլու դիլպար,
Օզուայ զուլար օլդիկում,
Գարդանուն տալ բօհուն սալվար,
Օզուայ զուլար օլդիկում։

. . . . . .

Քէշիշ օղլի դէր լազում տուր,
Էլրմտայ տութան սազում տուր,
Սառլանուի դէլան նազլում տուր,
Նազուայ զուլլար օլդիկում։ (5 տուն)

147ա Խէլի վախտ դուր զարֆրզան աղլարամ,
Զանուզուլտի ումր ազալտի գուն գէչտի,
Գօնդուլիլան ջանում ջանայ բազլատում,
Զան ուզուլտի ումր ազալտի գուն գէչտի։

. . . . . .

Քէշիշ օղլի գօզալ-սէվմակ հաւաս տուր,
Դարտ սարին չաքմախգէնայ հարաս տուր,
Զան բլբուլ տուր պուղուուրթան դաֆաս տուր,
Զան ուզուլտի ումր ազալտի գուն գէչտի։ (7 տուն)

148ա Գէլուզուն գօնդարմայ դիլպար,
Սէվարամ ջանի գօնդուլտան,
Ազուզուայ զարայխալլար,
Սէվարամ ջանի գօնդուլտան։

. . . . . .

Բիր ֆազիր Քէշիշ օղլիամ,
Ղըզիլ գուլուն բլբուլիամ,
Շընդի նազլըմուն զուլիամ,

Սէվարամ ջանի գօնդուլտան։ (5 տուն)

148բ Անպիրայ դանաղլար պիրայտան օթրու,
Բաղրի դարայ օլմիշ վարի բըլբուլուն,
Աղաջտան աղաջայ սիչրար տօլաչուր,
Բաֆայ սըզդուլ օլմազի այրի բլբուլուն։

. . . . . .

Բէչիշ օղլի դէր յըշխընդայ դալդում,
Յէչխուն սավդասին օգ պաչըմտայ բուլտում,
Գէնաման ալահայ դվասին ղըտում,
Պիրդայ չաղ ..... (5 տուն)

(Մնացեալը գրուած չէ, էջը մնում է թերի եւ այստեղ էլ գըրչագիրը վերջ է գտնում)։

ԳՐՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

100ա Զստացող տօմարիս, զԽաչիկ գրչիս յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ, Ամէն։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

56ա Թիւն մեծ ՌՃՂԹ (1750) եւ փոքր Թիւն ՃԼ Մայիսի ԻԸ (28) շրաթ Թ Բ. շաբաթ ողորմելի Վարդան առ Ած. փոխվէց ի քաղաքն Քաշան Ած. իւր հոգին լուսայորի ամէն։

80բ Ես տէր Մինասս որ Իսպահանու դուս եկա Օգոստոսի մեծ Թիվն ՌՃԶԶ (1737) ԻԱ (21) օրն Կիրակի, Թիվն փոքր ԱՃԻԲ Նաղար Դ (4) ումն, օրն Կիրակի, Սեպտեմբերի Բ-քումն դալիս ելանք բէբան (բէհբհան?), օրն Ուրբաթ Գ ումն դուս էլանք, օրն Շաբաթ Է ումն դալիս էլանք Խալիֆաբադ։

81ա Տէր Յիսուս ամենայկալն, բարի ճանապար տայ պրն Յովանջանին եւ ուր ամենայն դաֆին(?) որ Իսպահանայ, դուս ելան մեծ Թիվն ՌՃԻԱ (1772) Յունիսի Բ. ժումն, օրն Գ. շաբաթ փոքր Թիվն ԱՃԼԷ շրաթ ԺԴ ումն վերջ։

92բ Ես տէր Մինասի որդի Մուքէլս Ա դանայ Թեփռէ գրիճ յինքառի լուսայհոգի Խաչատուրի որդի պրն. Սիմոնէն որ Թիվն ՃԽԲ (1757) դամա Իե (25) որ լուսայհոգի փիրէնաց(?) ամբրովն էր ելէլ գրիճ դամբարն պրն. Սիմոնն բերէլ էր տուն որ ես գրիճն յինքառի քանի տողմէս տեղս գրեցի։

ԹԻՒ 8

Բառարան — ժողովածու

1845 թ.

Թերթ՝ 109։ Պրակ՝ 8, իւրաք. 12 թերթ, ոմանք աւել եւ անկանոն։

Մեծութիւն՝ 18×11 սմ.×2: Նիւթ՝ Դեղնաւուն հաստ թուղթ, որոշ պրակներ բարակ: Կազմ՝ Մաշուած կաշի, ներսից կապոյտ թուղթ: Պահպանակ՝ Զունի: Վիճակ՝ Վատ, սկզբից եւ վերջից թերի: Պարապ թերթեր՝ Զունի: Գիր՝ Նոտրգիր: Գրութիւն՝ Միասիւնակ: Տողեր՝ 23: Գծումները՝ ճնշումով: Թանաք՝ Սեւ, որոշ մասում որոշ տողերը կարմիր: Զարդագրութիւններ՝ Զունի: Գրիչ՝ Տէր Կարապետ (Օհանեան-Բաղումեան, Սանգիբարանցի?): Ժամանակ՝ 1845: Վայր՝ Հաւանաբար Սանգիբարան-Փերիա:

Ծանօթութիւն. Պատկանում է Պր. Մանասէր Լազարեանին, Նոր Զուղա: Վերջին թերթի Բ. էջի վրայ կայ մի պարսկերէն կնիք, որ դժուարութեամբ կարդացւում է. «Առաքել էրնը Սիմոն» (Առաքել որդի Սիմոնի):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1–20ա (Բառարան, որն սկսւում է Դ-ի վերջին մասից եւ շարունակւում մինչեւ Օ):

20ա–20բ (Թանկարժէք քարերի անուններն է եւ անձնանունների բացատրութիւն-նշանակութիւնները):

21ա–50ա (Ժամանակագրութիւն եւ քրիստոնէական դիտելիքների հարց ու պատասխաններ):

50ա (Քրիստոնէական-հարց ու պատասխաններ, առաջին մաս):

68ա «Ցաղագս խոստովանութեան» (եւ աղօթքներ, մեղայականներ, Աւետարաններ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

68ա Զայս աղաչեմ ի սիրելեաց:
Սղալանքս թողէք ի բաց:
Որ եմ Գէորգ մեղօք լցաց:
Նոյն մէկ թոխան է իմ դրաց:
(Թերթ 67-բ-ն գրուած է միայն այս գրիչով) իսկ ձեռագրի դրչով դրա դիմաց գրուած է.

68ա Տէր Կարապետէն է 1845 Փետրվարի 21-ին:

(Գրիչի ձեռագիրը շատ նմանութիւն ունենալով երգիչ Տէր Կարապետ-Օհանեան-Բաղումեանի ձեռագրին, շատ հաւանաբար գրուել է նրա կողմից):

ԹԻՒ 9

Մանկութիւն Յիսուսի

ԺԸ. դար

Թերթ՝ 113: Պրակ՝ 13, իւրաքանչիւրը 12 թերթ, ոմանք թերի

եւ անկանոն։ Մեծութիւն՝ 15×9·5 սմ.։ Նիւթ՝ Թուղթ։ Կազմ՝ հաստ խաւաքարտ, պարզ, սովորական, ներսից սպիտակ Թուղթ։ Ա. կազմի ներսում կայ մի պարսկերէն կնիք, որ կարդացւում է «Ցակոբ–Առաքելեան»։ Վիճակ՝ Վատ պահուած, սկզբից եւ վերջից Թերի, Թղթերը ջուր տեսած եւ եզրերը Թանաքով սեւացած ու կեղտոտուած։ Պարապ Թերթեր՝ 31, 32ա, 96բ, 97, 98, 101բ, 102, 103ա։ Գիր՝ Բոլորգիր։ Գրութիւն՝ Միասիւն։ Տողեր՝ 18։ Գծումները՝ Մեղմ մատիտով։ Թանաք՝ Սեւ, մեծատառերն ու խորագրերը կարմիր, ինչպէս եւ լուսանցքագծերը։ Զարդագրութիւններ՝ Չունի։ Պատկեր՝ Չունի։ Խորան՝ Չունի։ Կիսախորան՝ Չունի։ Ճակատազարդ՝ Չունի։ Լուսանցազարդ՝ Չունի։ Գրիչ՝ Անյայտ։ Ժամանակ՝ ԺԸ. դար։ Վայր՝ Անյայտ։ Պատուիրատու՝ Անյայտ։

Ծանօթութիւն. Մօտ անցեալում պատկանում էր տէր Տաճատ Մարկոսեանին, իսկ այժմ Տէր Համազասպ (Ցակոբ) Առաքելեանին, Նոր Ջուղա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկզբից Թերի է. սկսւում է 62–րդ էջով եւ պատկանում է Յիսուսի ծնունդին, որ աւարտւում է էջ 70–ին, ձեռագրի Թերթ 4բ–ում։

4բ–8բ Ցաղագս վասն դարձեալ նենգութեամբ, սպանանել զՋաքարիայ զհայրն Յովհաննու.—

Իսկ անօրէն բռնաւորն իբրեւ ոչ կարաց իրաց հնարս գտանել։ Ապա խնդիրս արարեալ....։

8բ–13ա Ցարուցեալ Յովսէփ վաղուաղակի առ զմանուկն եւ զմայրն իւր զնաց փախըստական...։

13ա–22բ Ցաղագս վասն Յիսուսի խորտակելոյ զկուռսն եւ կործանելոյ զմեհեանս դիւացն եւ բազմութիւն մարդկան որ մեռան անդ եւ յարութիւն եղեւ իսկ.—

Եւ Յիսուս յարուցեալ վաղուաղակի զնաց անդր եւ եմուտ ի տաճարն կռոց եւ հայէ շուրջ զնոքօք։

22բ–31բ Ցաղագս վասն դարձեալ հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ զնաց յերկիրն Իազի եւ բնակիլ նոցա յաշխարհն Գալիլեացւոց քաղաքն Նազարէթ.—

Եւ ի վաղիւն յարուցեալ նոցա եկին յանցանել յերկիրն Մովաբու յանդիման Մամբրէի...։

32բ–40ա Ցաղագս վասն երանելոյն նոցա յԵգիպտոսէ եւ գալ ի կողմանս հարաւոյ յաշխարհն Արաբիոյ տղայութիւն զոր առնէր Յիսուս եւ մահուան որ եղեւ յարութիւն մեռելոց։

Եւ ի գիշերին յայնմիկ յարուցեալ Յովսէփ առ զմանուկն եւ զմայր իւր...։

40ա–42ա Ցաղագս փոխելոյ նոցա անդրէն եւ զնաց նոցա յերկիրն Ասորեստանեաց.—

Եւ ի գիշերին յայնմիկ առեալ Յովսեփայ զմանուկն եւ զմայր իւր եւ զնաց փախստեամբ յերկիրն Քանանու....:

42ա–50բ Ցաղագս վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս եւ մահուանն, որ եղեւ իսկ եւ յարութիւն եւ մեռելութիւն զոր առնէր Յիսուս:

Յարուցեալ Յովսէփ առ զմանուկն եւ զմայր իւր եւ եկեալ յերկիրն Իսրայէլ ի քաղաք մի որ կոչի Բոդոսորոն....:

50բ–62բ Ցաղագս վասն զնալոյ նոցա ի քաղաքն Տապարիայ տալ զնայ ի յարվեստ ներկութեան եւ տղայութիւն զորս առնէր Յիսուս եւ սքանչելեացն որ եղեւ անդ.—

Յարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն առ զմանուկն եւ զմայրն իւր եւ եկեալ նոցա ի քաղաքն եւ անդ իջեւանս....:

63ա–70ա Ցաղագս երթալոց նոցա Յարեմաթեա քաղաքի եւ տղայութիւն զոր առնէր Յիսուս եւ մահուանն որ եղեւ իսկ եւ յարութեան եւ մեռելութիւն զոր արար Յիսուս.—

Յովսէփ եւ Մարիամ երկուցեալ ի դատաւորէն եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ առեալ զՄարիամ եկեալ ի քաղաքէն...:

70բ–72բ Ցաղագս երկմտելոյ նոցա անդ ի գնալ յԱրտեւան լերինն եւ տղայութեան զոր առնէր Յիսուս ընդ մանուկս եբրայեցւոց.—

Յարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն առ զմանուկն եւ զմայրն իւր· եւ եկեալ ի քաղաքէն երթային լռութեամբ...:

72բ–77բ Ցաղագս դարձեալ անդէն գալ նոցա ի քաղաք մի որում անուն էր Եմաւուս եւ բժշկութիւն եւ սքանչելացն զոր արար Յիսուս ի վերա հիւանդաց.—

Իբրեւ զայն տեսեալ Յովսէփ եւ Մարիամ առեալ զմանուկն Յիսուս գնացին ի գիշերն եւ եկեալ նոցա ի գիւղ...:

78ա–96ա Ցաղագս վասն հրեշտակն ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարեթ եւ սքանչելեացն եւ բժշկութեան զոր առնէր Յիսուս.—

Եւ յաւուր մի տեսլեան գիշերին երեւեալ հրեշտակ Տեառն Յովսեփայ եւ ասէ ցնա՛ արի առ զմանուկն...:

99ա–101ա Սրբոյ Աւետարանս ըստ Մաթէոսի:

Գիրք ծնընդեան Յիսուսի Քրիստոսի որդի Դաւթի...:

(Այս Աւետարանից յետոյ տեղ է թողնուած յիշատակարան գրելու բայց չի գրուել· այս մասի վերջում կայ մի յիշատակարան, որ կը բերենք վերջում եւ պատկանում է Յովհաննէս Թլկուրանցուն. «ՅԱրարածոցն Մովսիսի մեկնեալ Վարդան Վարդապետ», որի առաջին տողերը գրուած չեն եւ սկսւում է այսպէս).

104ա–113բ «Յոյնք հողմ ասեն չէ պատշաճական»։
Վերջը՝ «Զի թէ ի մեղօք անկան աճեցին դեռեւս յոռացան...»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅՕՐԻՆՈՂԻ

103բ Ես Յովհանէս Նըւաստոգի
Յորմակ անուն Թուգուրանցի,
Կամաւ իմով ի հոգ մտի,
Բանս ժողովել ինձ յիշելի։

Աստ կարճաբան հաւաքեցի,
ՅԱրարարածոցըն Մովսեսի,
Մեկնեալ Վարդան Վարդապետի,
Քաղեալ ի հարցըն ոգելի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ

96բ Շնորհօք Տեառն ըսկսա եւ ողոր (մնացեալը չի գրուել)։

Թիւ 10
Պատմութիւն Լուքփիկի եւ Աղէքսանդրի
ԺԸ. դար

Թերք՝ 50։ Պրակ՝ Թերթահան, անկանոն, Մեծութիւն՝ 18×12×1 սմ.։Նիւթ՝ Դեղնաւուն հաստ թուղթ։ Կազմ՝ Կրկնակ կաշեպատ ստուարաթուղթ, ներսից կարմիր ծաղիկներով կտաւ։ Պահպանակ՝ Զունի։ Վիճակ՝ Քայքայուած, սկզբից եւ վերջից թերի, թերթերը տեղահանուած եւ խառնուած, ծայրերը մաշուած, կէս մասից իւղոտուած։ Պարապ թերթեր՝ Զունի։ Գիր՝ Նոտրգիր։ Գրութիւն՝ Միասիւնակ։ Տողեր՝ 20։ Գծումները՝ ճնշումով։ Թանաք՝ Սեւ, վերնագրերն ու մեծատառերն կարմիր։ Զարդագրութիւններ՝ Զունի։ Գրիչ՝ Անյայտ։ Ժամանակ՝ ԺԸ. դար։ Վայր՝ Անյայտ։

Ծանօթութիւն. Պատկանում է Մանասէր Լազարեանին (Ղազարեան), Նոր Ջուղա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա–բ Գնալն Աղէքսանդրի յերկիրն իւր ի Թագայորել գալն Սիդոնի որդոյ սպանն ի սորա(?) արքայն(?)։

Եւ գնաց Աղէքսանդր ի ճանապարհ իւր աղջիկն եւ Լուքֆիկ դառնան ի պալատն իւրեանց...»։

13բ Գնայլն Լուքֆիկն երկիրն(?) կայսերն զօրօք յԵգիպտոս եւ նուաճելն զԵգիպտոս ընդ ձեռամբ Աղէքսանդրի եւ այրեն Թագոհին։

Յետ այնորիկ կայս[ր]ն բազում զօրս զումայրեալ գնաց Եգիպտոս եւ ըմբռնեաց զթագաւորն Աղէքսանդրի եւ հրամայեաց։

15ա Ութերորդում աւուր ժողովումն դպրապետն եւ առսոյլ զորդի արքային եւ բաղում ժողովուրդօ բերումն առ կայսրն եւ խօսիլն.

Ցութերորդում աւուրն ժողովեցին եօթներքին դպրապետքն ի միասին եւ հարցանէին որդոյ արքային եւ ասէին...

16ր Ա[յ]տառակել Դիոկղիտիանոսի զթագուհին եւ մերկացուցանելն զերիտասարդն ի կանացի ըզգեստէն.

Յայն ժամ ասէ որդին արքային ցհայր իւր տէր արքայ ամբարձ զաչս քո եւ հայեայ ի կոյանսն թագուհոյ քո...

19ա Առակ Դիոկղիտիանոսի որդոյ աբքային զոր ասացեալ ի լուր ամենայն հրապարակին.

Կայր քաղաքի միում յԵգիպտական սահմանին զինուոր մի եւ ունէր որդիակ մի միամօր որպէս եւ դու ունիս...

21ր Զոր[ր]որդ առակ թագուհուն զոր ասաց վասն ումեմն թագաւորին եւ եւ է իմաստնասիրաց նորա որ կախարդեցին զլուսն աչաց նորա:

Ի ժամանակի միում կայր թագաւոր մի մեծ եւ անուվանի յոյժ եւ ունէր իմաստասէր է եւ թագաւորն այն...

27ա Վեցերորդ անգամ զորդին արքային տանիլ ի մահ եւ Կղէպոս դպրապետն առակօք փրկել զնայ:

Ի վաղիւն ելեալ կայսերն նստէր ի գահուոյն իւր եւ իսկոյն կոչեաց զդահճապետն եւ ասէ հան զորդին իմ ի բանտէն եւ առ ժամանն տար սպան զնայ...

29ա Առակ վեցերորդ դպրապետին Կղէոպասայ զոր ասաց վասն կնոջ ումեմն, որ ըսպանէր զինայորն եւ յետոյ ինքն եւ զայն այլ ըսպանին չարաչար մահվա(մ)ր որով փրկեցաւ մանուկն:

Ի քաղաքի միում էր կայսր ոմն եւ ունէր երիս զիայրս քաջամարտիկս եւ յոյժ սիրէր զնոսայ...

30ր Առակ չորորդ դպրապետին զոր ասաց վասն կնոջն միոյ որ կամէր սիրել զգահանայն սիրով կինն.

Ի քաղաքի միում կայր զիհայ(?) մի ծեր արդար եւ երկիւղած յոյժ...

37ր Եօթներորդ անգամ զորդի արքային տանիլ ի գլխայտումն եւ եօթնումն դպրապետն Ցովայկիմ անուանեալ առակօք փրկել զնայ.

Ցեօթներորդումն աւուրն ելեալ կայսրն նստէր ի գահուն իւր եւ հրամայեաց կոչել զդահճապետն եւ ասէ...

39ա Եօթներորդ առակ զոր ասաց Ցովայկիմ դպրապետն եւ փրկեաց զմանուկն եւ խոստացեալ խօսք.

Ի քաղաքին միում էր զինայորն ոմն ազայտազն եւ ունէր կին գեղեցիկ որպէս թագուհին քո եւ...

46բ Եօթներրորդ առակ թագուհոյն զոր ասաց վասն թագաւորին ումեմն որ ունէր զինայոր մի յոյժ սիրելի որ է առ զթագուհին եւ փախեաւ։

Ի քաղաքի միում կայր թագաւոր մի եւ սիրէր զթագուհին յոյժ եւ պահէր զնայ ի մէջ ամուր աշտարակին միում...

50ա Զորորդ անգամ տանիլ զորդին արքային ի մահ եւ դալ հասանել մալխի օր ախ դպրայպետն եւ առակօք ազատեաց։

Ի չորորդիւն աւուրն նստեալ կա[յ]ս[ր]ըն ի դայումն իւր եւ հրամայեաց զդահճայպետն կոչել առ ինքն...

(Թերթեր 45բ–ի եւ 46ա–ի վրայ, որ անցեալում եղել է պարապ գրուել է երկու երգ տարբեր ու անվարժ գրիչով որոնց սկզբնատողերից մէկ երկուսը բերում ենք ստորեւ)։

Զում նոր աս յիմանման դու իմ հագալն

. . . . . .

Քշերն էրմանամ ցէրէկն փոշմանամ
Զեմ խբար թէ քո սէրն յիչայ չինել ինձ։

. . . . . .

Ղուլ Մարկոսէս քո ձեռնուն գար? քեզ զինտ...?
Քո աչքի ցաւն քաչիր տուր ինձ։

Ահա տեսէք զինչ կար ճիւղին
Որ նաւն ուտամբ(?) գայր
Ահա տեսան բուն կայր ճիւղին
Ճիւղի ծառին.....
Մի տուի բեմին, բեմին(?)

NEW MANUSCRIPTS

L. K. MINASSIAN

(Summary)

The author presents ten new Armenian manuscripts, of which six are found in New Julfa, two in Teheran, one in London, and one in the Penaki Museum of Athens. Six of these manuscripts are Gospels copied in the years of 1480, 1582, 1630, 17th c., 1933 and 1938. One of the manuscripts is a Barzadoumar — Hymn book (1660?); the other is a Dictionary — Compilation (1845), and the remaining two are entitled **The Childhood of Christ** (18th c.) and **The History of Ludwig and Alexander** (18th c.).